

ջանակաձև մեծ պատուհան մը (rose), զարդարուած անուրններէ և բացուած քներէ՝ կրկնակ շրջանակի մը վրայ ընդելուզուած ըլլալով: Ան կորուսած է իր քարէ պահպանակը:

The Survey Western Palestine ի ծանօթագրութեան մը մէջ մայր եկեղեցիին դուռը իտալական արուեստ կը համարուի. վասն զի շինուած է համակ սպիտակ մարմարէ. բայց իր ոճը Ֆրանսական է. խիստ թեթև կերպով փոխուած արարական ազդեցութեան տակ: Աս ժԻ. դարու երկրորդ կիսուն պաղեստինեան ոճէ է իր բոլոր պարզութեամբը:

Թմբուկը ողորկ է և նկարուած պէտք է ըլլայ: Ան չի կրօթնիր ցցուած ձևով փայտի մը՝ այլ դրանգիներուն բարաւորներուն վրայ: Կամարաքիւր ունի երեք կամարներ՝ իւրաքանչիւր կողմէ սիւններու համապատասխանող և զարդարուած բացուած քներով:

## Գ. Ս. Պորփիրի եկեղեցին.

Clermont-Ganneau այս եկեղեցիին նկարագրականը ունի յատակագիծով միասին: Եկեղեցին արտաքին կերպով շատ խորացած է և ունի լայն կողակ մը, և կամարակապ դասի կարճ գերանամէջ մը: Կամարի պարանոցը կրող երկու կիսասիւններուն գործածած են սիւններ՝ որ հին հատուածներ են և ամբողջացուցած են բիւզանդական թակադակով մը և շեղեղրուած պատուանդաններով: Դուռը ոճ չունի. գաւթը անհետացած է. պատուհանները կամարած են. որմայեցերը կրկնակ են, ինչպէս մայր եկեղեցիինը: Արեւելեան կողմի խոշոր որմայեցերուն մէջ է որ հողացուած են երկու փոքր առանձնոցներ:

Դրան վրայ զետեղուած յունական արձանադրութիւն մը կը վկայէ թէ եկեղեցին նորոգուած է և պաշտամունքի համար կը ծառայէ յոյն հասարակութեան միջոցաւ 1856 թուականին:

## Գ. Տուներու դուռներ.

Ս. Պորփիրէն ոչ հեռի միջահակ դուռներով երկու տուններ կը տեսնուին, հորիզոնական շեղեղրով մը վեր ելած և մանրա-